

25.903

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ
ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՏԻԿՆԵՆԻ
ԴԱՐԱՆԻ ԴԵՊՈԶԻ
ՀԱՅԿԱՍՏԱՆ
ԵՍՍՀՄ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԻԼԵՆԿՈՎՈՅԻ ԱՐՏԱԴՐ.-ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԾԽԱԽՈՏՄԻՈՒԹՅՈՒՆ

1927 թ.

334.5

Ա-19

1927 JAN 2010

U
C 2483

Ծխախոտագործ. Կենտրոնական Միության Վարչության կողմից հաստատված և 1927 թ. Նոյեմբերի 24-ին:

334.5

Ա-19

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԼԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ - ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԻԱԽՈՏԱԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОБОЩЕНИЯ
Академии Наук
СССР

Մ Ո Ս Կ Վ Ա

ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԾԵԱԽՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1927 թ.

15.01.2013

25.903

Типография Издательства "Сев-
кавиздат" ул. Энгельса № 11
Донлит № 2972



56852-66

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՅՈՒՂԱ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Դյուղատնտեսական կոոպերացիայի մասին տի-
րոջ որենքների հիման վրա ներկա կանոնադրության
համաձայն հիմնվում է Լոռյի Արտադրական-Սպառողական
Դյուղատնտեսական Կոոպերատիվ Ընկերություն:

2. Ընկերությունը գործում է Ազգերի ռայոնում:

Ընկերության Վարչությունը գտնվում է Ազգերում:

3. Ընկերության նպատակն է աջակցել ծխախո-
տապորձական և իր անդամների տնտեսության բարե-
լավման, նրա արտադրականության և արդյունավե-
տության բարձրացմանը հետևյալ միջոցներով.

ա) կազմակերպում է ծխախոտի արտադրու-
թյան, մթերման, վերամշակման և սպառման գործը.

բ) մատակարարում է Ընկերության անդամներին
գործիքներ, սերմացու, պարարտանյութ, ֆուստատու-

ների գեմ կռիւն միջոցներ և ուրիշ առարկաներ և նյութեր, վորոնք անհրաժեշտ են ծխախոտագործական տնտեսութեան մեջ.

գ) տարածում և Ընկերութեան անդամներէ մեջ ծխախոտագործական տնտեսութեաններէ և կոոպերացիայի վերաբերյալ գիտելիքներ:

4. 3-րդ կետում հիշատակված նպատակներն իրագործելու համար Ընկերութեան իրավունք ունի.—

ա) կատարել առևտրական գործառնութեաններ՝ ծխախոտի սպառման և իր անդամներին ծխախոտագործ. տնտեսութեաններ վարելու պետք իրեր մատակարարելու նպատակով, ինչպես իր հաշվին, նույնպես և կոմիսսիոն սկզբունքներով.

բ) բաց անել պահեստներ և պահեստի գործառնութեաններ կատարել.

գ) կադմակերպել արտադրական (արդյունաբերական և գյուղատնտեսական) ձեռնարկութեաններ ծխախոտի վերամշակման համար.

դ) կադմակերպել ցուցադրական և փորձնական հիմնարկութեաններ, սերմնարաններ, փոխատու կայաններ, ինչպես նաև ուրիշ ագրիկուլտուր ձեռնարկութեաններ, վորոնք համապատասխանում են Ընկերութեան նպատակներին.

ե) կադմակերպել դասընթացներ, դրադարաններ, ցուցահանդեսներ և այլ կուլտ-կրթական ձեռնարկութեաններ.

զ) ընդունել դրամական ավանդներ փոխառութեան սկզբունքներով և կատարել փոխառութեաններ.

ը) կատարել այլ գործողութեաններ, վորոնք չեն հակասում տիրող որենքներին և այս կանոնադրութեան:

5. Ընկերութեան իր աշխատանքները առաջ և տանում նպատակով իր անդամներէ մեջ ծխախոտագործական տնտեսութեան կոլլեկտիվ ձևերի, հողերի ավելացման (մելիորացիա) և բարելավման, նույնպես ծխախոտագործական տնտեսութեաններէ մեջ մեքենաների և բարելավված միջոցների գործադրութեանը:

6. Ընկերութեան ոգովում և իրավաբանական մարմին բոլոր իրավունքներով:

7. Իր պարտքերի գեմ Ընկերութեանը պատասխանատու յե իր բոլոր ստացվածքով և, բացի այդ՝ Ընկերութեան անդամներն, Ընկերութեան ստացվածքը պարտատերերին չբավարարելու դեպքում, կամ Ընկերութեան լիկվիդացիայի ժամանակ, լրացուցիչ պատասխանատվութեան են կրում այս կանոնադրութեան 14 §-ի համաձայն:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ընկերութեան անդամ կարող են լինել.—

ա) այն անձինք, վորոնք պարագլում են ծխախոտագործութեամբ Ընկերութեան ռալոնում և լրացրած են 16 տարին.

բ) այն անձինք, վորոնք զբաղվում են հասարակական ոգտակար աշխատանքով, Ընկերութեան գործունեութեան ռալոնում և նպաստում են ծխախոտագործութեան զարգացման.

գ) գյուղատնտեսական ծխախոտագործ կոլլեկտիվներ, վորոնք գործում են Ընկերութեան գործունեութեան ռալոններում:

դ) գյուղացիական փոխադարձ ոգնութեան ընկերութեանները, վորոնք պարագլում են արտադրական գործունեութեամբ ծխախոտագործական տնտեսութեան ասպարիղում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ընկերութեան անդամները չեն կարող միաժամանակ ուրիշ ծխախոտագործական արտադրական-սպառող. կոոպերատիվ կադմակերպութեան անդամ լինել:

9. Ընկերութեան անդամների ընդունելութեանը կատարում և Ընդհանուր Ժողովը, կամ նրա լիազորութեամբ, Վարչութեանը, կամ Վարչութեանը և Խորհուրդը միասին:

10. Այն անձինք, վորոնք ցանկություն ունեն Ընկերության անդամ դառնալ խնդիր են տալիս Ընկերության Վարչությանը, պարտավորվելով յենթարկվել սույն կանոնադրության կանոններին և Ընկերության վարչական մարմինների վորոշումներին, ինչպես նաև հանձն առնելով կանոնադրությամբ նախատեսված պատասխանատվութիւնը Ընկերության պարտքերի վերաբերմամբ:

11. Ամեն մի Ընկերության անդամ ընդունվողը պարտական է վճարել սահմանված անդամակցական վճարը և փայլը, նույնպես և հատուկ վճարները, յեթե այդպիսիները սահմանված են:

12. Փայլ ուրիշին տալ չի կարելի, բացի այն դեպքերից, յերբ անդամի մահվանից հետո, յեթե նա ինքնուրույն տան տեր եր, նրա փոխարեն՝ յերեք ամսից Ընկերության մեջ կմտնի, Ընդհանուր ժողովի հետագա հաստատմամբ, այդ տան նոր տերը:

13. Այն գումարները, վորոնք մուծված են իբրև փալավճար՝ վերադարձվում են 22 §-ի համաձայն Ընկերությունից դուրս գալու դեպքում: Անդամավճարը վոյ մի դեպքում չի վերադարձվում:

14. Ընկերության ամեն մի անդամ, իր անձնական պարտքերից զատ, պատասխանատու յե Ընկերության պարտքերի դեմ, առաջին հերթին՝ իր փալավճարներով և բացի այդ՝ լրացուցիչ պատասխանատու յե Ընկերության հիմնական փալավճարի տասնապատիկ չափով:

15. Ընկերության անդամագրվողը պատասխանատու յե Ընկերության և այն պարտքերի վերաբերմամբ, վորոնք գոյացել են մինչև նրա անդամ դառնալը:

16. Ընկերության ամեն մի անդամ իրավունք ունի դուրս գալ Ընկերությունից, զրավոր հայտարարութիւն տալով այդ մասին:

17. Ընկերության այն անդամը, վորը չի կատարում իր պարտականութիւնները Ընկերության վե-

րաբերմամբ, խախտում է կանոնադրությունը, չի յենթարկվում Ընկերության վարչական մարմինների որինավոր պահանջներին, կամ առհասարակ գործում է ի վրաս Ընկերության, կարող է հեռացվել Ընկերությունից Ընդհանուր ժողովի վորոշմամբ: Հեռացված անդամը կարող է նորից Ընկերության անդամ ընդունվել միայն Ընդհանուր ժողովի վորոշմամբ:

18. Ընկերության անդամ վորեք կազմակերպության գործունեության դադարելու մասին վորոշումը—հավասար է նրա Ընկերությունից հեռանալու մասին հայտարարության (§ 20): Մեռած անդամներին՝ մինչև նրանց փայլը 12 §-ի համաձայն ուրիշին անցնելը, դուրս է հանում Ընկերության անդամների ցուցակից Վարչությունը:

19. Ընկերության այն անդամը, վոր կորցնում է Ընկերության անդամ դառնալու անհրաժեշտ հատկութիւնները, Ընկերության կազմից հեռացվում է Վարչության և Խորհրդի միացյալ ժողովի վորոշմամբ:

20. Անդամի հեռացման որը համարվում է—կամավոր հեռանալու դեպքում՝ հեռանալու մասին հայտարարութիւն տալու որը, մեռած անդամի համար—մեռած որը, ուրիշ պատճառներով հեռացածների վերաբերմամբ (17 §)—Ընկերության համապատասխան մարմին վորոշման որը այդ անդամին Ընկերության կազմից հեռացնելու մասին:

22. Ընկերության պարտք ունեցող անդամի կամավոր հեռանալու, կամ հեռացվելու դեպքում, Ընկերությունը իրավունք ունի ժամանակից առաջ ըռնել դուրս յեկող անդամի պարտքերը:

21. Դուրս յեկած կամ հեռացված, նույնպես և մեռած անդամների ժառանգներին փալավճարները և մյուս, վերադարձվելիք վճարները վերադարձվում են նրանց անդամութիւնից հեռանալու տարվա տարեկան հաշվի հաստատման որից՝ 3 ամիս անցնելուց հետո:

Ընկերութեան ուրիշ վոչ մի ստացվածքի վերաբերմամբ հեռացող անդամը իրավունք չունի:

Հեռացող անդամը, Ընկերութեան մնացած անդամների հետ հավասար, մասնակցում է Ընկերութեան արդյունքներին (ոգուտներին և ֆւնդներին), իսկ Ընկերութեան լիկվիդացիայի դեպքում լրացուցիչ պատասխանատվութիւն է կրում գործառնութեան այն տարվա համար, վորի ընթացքում հեռացել է: Հեռացող անդամի հետ հաշիւներ վերջացնելիս Ընկերութիւնը հաշիւի յետ առնում և նախկին անդամի չվճարված պարտքերը:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ

23. Ընկերութիւնն ունի հիմնական և պահեստի գրամագլուխներ և կարող է ունենալ հատուկ գրամագլուխներ:

24. Հիմնական գրամագլուխը բաժանվում է յետևեք մասի. 1) Մեփական, վորի մեջ են մտնում անդամավճարները, հատկացումներ զուտ վաստակի 25 տոկոսի չափով, նվիրատվութիւններ և ուրիշ մուտքեր, վորոնք կցվում են հիմնական գրամագլխին Ընդհանուր Ժողովի վորոշմամբ: 2) Փայերից կազմված գրամագլուխ, վորի մեջ մտնում են անդամների փայավճարները և լրացուցիչ 1 տոկոս հատկացում՝ անդամների հանձած ծխախոտի արժեքից և 3) Փոխարինարար առնված՝ վորի մեջ են մտնում այն գումարները, վորոնք ստացվում են իբրև փոխառութիւն՝ հիմնական գրամագլուխի համար:

25. Անդամավճարի չափը վորոշվում է. ա) Ընկերութեան անհատ անդամի ըի համար—6 ուրբի, բ) կոլլեկտիվների համար՝ ամեն մի լիազորից 6 ուրբի:

26. Փայի չափը վորոշվում է 24 ուրբի:

Ընկերութեան ամեն մի անդամ ունենալու յետ մի փայից վոչ պակաս: Առանձին կոլլեկտիվների համար,

վորոնք մտնում են Ընկերութեան կաշմի մեջ, պարտադիր փայերի քանակը վորոշում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովը, վորն այդ դեպքում ի նկատի յետ առնում այդ կազմակերպութեան մեջ մտնող անդամների թիւը և այս կամ այն տնտեսական հատկութիւնները:

Փայի վճարումը կարող է կատարվել մաս-մաս, համաձայն Ընդհանուր Ժողովի վորոշած կանոնների:

27. Պահեստի գրամագլուխը կազմվում է յուրաքանչյուր տարվա վաստակից հատկացումներ կատարելով, վաստակի 20 տոկոսից վոչ պակաս, պահեստի գրամագլուխի տոկոսներից և ուրիշ մուտքերից, վորոնք կցվում են պահեստի գրամագլուխին Ընդհանուր Ժողովի վորոշմամբ:

Յերբ պահեստի գրամագլուխը հասնի հիմնական գրամագլուխի փայավճարներից բաղկացած չափին, պահեստի գրամագլուխին հետագա հատկացումները տարեկան վաստակից կարող են Ընդհանուր Ժողովի վորոշմամբ կարճվել:

Ընդհանուր Ժողովը վորոշում է պահեստի գրամագլուխի այնպիսի տեղավորումը, վորն ապահովի նրա ամբողջութիւնն ու անարգել իրացումը, համաձայն այն կանոնների, վորոնք վորոշված են որինքով:

28. Հատուկ գրամագլուխները կարող են կազմվել ագրիկուլտուր գործառնութիւններ վարելու և այնպիսի ձեռնարկութիւններ կազմակերպելու համար, վորոնք հիշված են 4 § ում, նույնպես է Ընկերութեան անհրաժեշտ պույք ձեռք բերելու, ուրիշ հիմնարկների և կազմակերպութիւնների ակցիաներ և փայեր գնելու և ուրիշ այնպիսի նպատակների համար, վորոնք նախատեսված են կանոնադրութեան մեջ:

Հատուկ գրամագլուխների նպատակները, ադրյուրները և կազմելու կարգը վորոշում է Ընդհանուր Ժողովը:

29. Հատուկ դրամագլուխներ կաղմակերպելու համար Ընդհանուր ժողովը կարող է սահմանել անդամների համար ախպիսի պարտադիր վճարներ, վորոնք կարող են անդամի հեռանալու դեպքում վերադարձվել, ինչպես նաև անվերադարձ վճարներ և զուտ ոգուտից հատկացումներ կատարել:

Հատուկ դրամագլուխների մեջ կարող են մտնել նույնպես այն գումարները, վորոնք ստացվում են յերկարամյա փոխառության ձևով:

Յեթե Ընկերության անդամներին վերադարձվելիք վճարների վերաբերմամբ Ընդհանուր ժողովը առանձին կանոններ չի վորոշել, այդ վճարների վերաբերմամբ գործադրվում են նույն կանոնները, վորոնք սահմանված են փայավճարների (§ 21 և 22) վերադարձնելու և հաշվառման վերաբերմամբ՝ անդամների լրացուցիչ պատասխանատվությունն վորոշելու ժամանակ (§ 14):

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ա) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Ընկերության տնտեսական գործունեության ծրագիրը ամեն տարվա համար հաստատում է Ընդհանուր ժողովը, վոր վորոշում է, թե ի՞նչ գործառնություններ և վո՞ր միջոցների հաշվին պետք է կատարի Ընկերությունը և առանձին գործառնությունների վերաբերմամբ հիմնական կանոններ և սահմանում:

բ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

31. Ընկերությունն իրավունք ունի իր անդամներից ավանդներ ընդունելու փոխառության վերաբերյալ կանոնների համաձայն:

32. Ընկերությունն իրավունք ունի փոխառություններ անել, ինչպես իր անդամներից, նույնպես և պետական, կոապերատիվ և ուրիշ հիմնարկներից և առանձին անհատներից: Վարչության կատարած փոխառությունների պայմաններն ու չափը վորոշում է Ընդհանուր ժողովը, կամ նրա լիազորությամբ՝ Վարչությունը:

5. ՎԱՐՉԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՆՏՐՈԼԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

33. Ընկերության անդամների Ընդհանուր ժողովը Ընկերության բարձրագույն վարչական մարմինն է հանդիսանում:

Ընդհանուր ժողովի իրավասության են վերաբերում.—

ա) Վարչության, Խորհրդի, Վերասուզիչ Հանձնաժողովի անդամների և նրանց թեկնածուների քանակի վորոշումը և ընտրությունը և նրանց ժամանակից առաջ պաշտոններից հեռացնելը, նույնպես և լիազորների ընտրությունը:

բ) Ընկերության գործունեության ընդհանուր ծրագրի, ել և մուտքի նախահաշիվների, տարեկան հաշվետվության քննությունն ու հաստատումը և ոգուտի ու վրասի բաշխումը:

գ) Վարչության, Խորհրդի և Վերասուզիչ Հանձնաժողովի համար հրահանգների և Ընկերության գործառնությունների համար կանոնների հաստատումը:

դ) Վարչության, Խորհրդի և Վերասուզիչ Հանձնաժողովի գործունեության վերաբերմամբ զանգատների քննությունը:

ե) Ընկերության անդամների պարտադիր վճարների չափի ու մուծելու կարգի վորոշումը:

դ) Ընկերութեան համար պետք վարկի վերջնական չափի և Վարչութեան կատարելիք փոխառութեան պայմանների վորոշումը.

բ) Ընկերութեան գործունեութեան դադարեցնելու վերաբերյալ խնդիրների լուծումը.

թ) անդամների ուրիշ կազմակերպութիւն մտնելու խնդիրների լուծումը.

ժ) կանոնադրութեան փոփոխելու կամ լրացնելու խնդիրները.

ի) բոլոր այն խնդիրների լուծումը, վորոնք Վարչութեան և խորհրդի լիազորութիւնից բարձր են:

34. Ընդհանուր ժողով հրավիրում է Վարչութեանը առնվազն տարեկան մի անգամ և հաշվետու տարին լրանալուց վոչ ուշ քան 3 ամսից: Բացի այդ արտակարգ Ընդհանուր ժողով հրավիրվում է, յեթե կարիք կա, Վարչութեան վորոշմամբ կամ խորհրդի, Վերաստուգիչ Հանձնաժողովի կամ Ընկերութեան անդամների մեկ տասերորորականի պահանջով:

ՄԱՆՈԹՈՒՅՈՒՆ.— Յեթե Վարչութեանը այդ մասին համապատասխան պահանջ հայտարարվելու որից 2 շաբաթվա ընթացքում չհրավիրի Ընդհանուր ժողով, այն ժամանակ Ընդհանուր ժողով հրավիրում է խորհուրդը կամ Վերաստուգիչ Հանձնաժողովը:

35. Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յե բոլոր անդամների մեկ յերրորդ մասից վոչ պակասը:

Յեթե ժողովը հրավիրվում է՝ ա) անդամների Ընկերութեանից հեռացնելու, բ) փայլավճարների չափի փոփոխման, գ) հիմնական կամ հատուկ զբաղադրուկ կազմելու համար պարտադիր վճարների վորոշման, դ) կանոնադրութեան փոփոխութեան, ե) Ընկերութեան ուրիշ կազմակերպութեան անդամ դառնալու, զ) Ընկերութեան գործունեութեան դադարեցման խնդիրները

լուծելու համար, ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յե բոլոր անդամների կեսից վոչ պակասը:

36. Յեթե Ընդհանուր ժողով նշանակված որը նախընթաց հոգվածում նախատեսված թիվով անդամներ չհավաքվին, այն ժամանակ վոչ շուտ քան մի շաբաթից և վոչ ուշ քան մի ամսից հրավիրվում է յերրորդ Ընդհանուր ժողովը, վորը կանոնավոր է համարվում, վորքան ել անդամ ներկա լինի. այս կանոնը չի վերաբերում այն դեպքերին, յերբ Ընդհանուր ժողովը հրավիրում է նախընթաց հոգվածում հիշված խնդիրների լուծման համար Այդ վերջին հարցերը յերկրորդ Ընդհանուր ժողովը լուծում է միայն բոլոր անդամների մեկ յերրորդի մասնակցութեամբ, ըստ վորում, յեթե յերկրորդ ժողովին անդամների անհրաժեշտ թիվը չհավաքվի, խորհուրդը՝ Վարչութեան հետ միասին հրավիրում են վերև (34 և 35 կետերում) հիշած ժամանակամիջոցի և կարգի համաձայն, անդամների ժողովներ Ընկերութեան առանձին ռայոններում: Յերկրորդ Ընդհանուր ժողովի և ռայոնական ժողովների քննութեան առարկա կարող են լինել միայն այն խնդիրները, վորոնք մտնում էյին առաջին, չկայացած Ընդհանուր ժողովի որակարգի մեջ: Ռայոններ վորոշում է Վարչութեանը խորհրդի հետ միասին:

37. Ընկերութեան ամեն մի անդամ, վորոնց թրվին և կոտպերատիվ կազմակերպութիւններ, բացի գյուղատնտեսական կոլլեկտիվներից, անկախ իրենց ունեցած փայերի քանակից, Ընդհանուր ժողովում մի վճռական ձայնի իրավունք ունեն, վորը չի կարելի տալ ուրիշին՝ բացի § 12-ում հիշված դեպքից:

Գյուղատնտեսական կոլլեկտիվներին թույլ է տրվում Ընկերութեան Ընդհանուր ժողովում ունենալ մի քանի ներկայացուցիչներ—վճռական ձայնով: Այդպիսի ներկայացուցիչների (ձայների) թիվը վորոշում է Ընկերութեան Ընդհանուր ժողովը, վորն այդ դեպքում ինկատի յե առնում այդ կոլլեկտիվի անդամների թիվը և այլ հատկանիշներ (§ 26):

ԾԱՆՈԹՈՒԹ ՅՈՒՆ. — Անկախ զբանից, գյուղատնտեսական կուլիեկտիվների այն արդամները, վորոնք անդամ են Ընկերության, 10 §-ի համաձայն, իրավունք ունեն մասնակցել Ընկերության Ընդհանուր Ժողովների Ընկերության բոլոր անդամներին հավասար:

38. Ընդհանուր Ժողովում վորոշումներն ընդունվում են ներկա յեղողների ձայների հասարակ մեծամասնությամբ:

39. Ընդհանուր Ժողովի վորոշումները արձանագրվում են առանձին զրքի մեջ, ստորագրվում են նախագահի, քարտուղարի, խորհրդի ներկա յեղող անդամների, Վարչության անդամների և Ընդհանուր Ժողովից այդ նպատակով ընտրված՝ Ընկերության անդամներից վոչ պակաս քան 3 հոգու կողմից: Ժողովի արձանագրության կցվում է Ժողովին ներկա յեղող Ընկերության բոլոր անդամների ցուցակը: Այդ ցուցակը պետք է վավերացված լինի վերև հիշված անձանց կողմից:

Ընդհանուր Ժողովի վորոշումները պարտադիր են Ընկերության, թե Ժողովին ներկա յեղող և թե բացակայող անդամների համար:

40. Յեթե Ընկերության անդամների թիվը 300-ից անցնի, այն ժամանակ Ընդհանուր Ժողովը առանձին վորոշմամբ, (իբրև կանոնադրության լրացում), կարող է սահմանել Պատգամավորների Ժողով, վորոնք ընտրվում են Ընկերության անդամներից և այդ Ժողովի վրա դնել այն գործերի և խնդիրների լուծումը, վորոնք Ընդհանուր Ժողովի իրավասության մեջ են մտնում, բացի Ընկերության գործունեության դադարեցման, Պատգամավորական Ժողովների վերացման և նրա մասին կանոնադրի փոփոխության վերաբերյալ խնդիրներից: Պատգամավորների ընտրության կարգը, նրանց թիվը, իրագործությունների սահմաններն ու ժամանակամիջոցը, ինչպես նաև Պատգամավորական Ժողովի իրավասության շրջանակը վորոշվում է հատուկ կանոնադրով:

2) Խ Ո Ր Շ ՈՒ Ր Դ

41. Խորհրդի պարտականություններն են հսկել՝ վոր Վարչությունը Ընկերության գործերը նպատակահարմար առաջ տանի և կանոնավոր գործադրի Ընկերության կանոնադրության կետերը, որենքները, հնարահանգները և Ընդհանուր Ժողովի որինավոր վորոշումները: Դրա համար Խորհրդի առաջ բաց են լինելու—գրամարկղը, վավերաթղթերը, հաշվապահությունը, գործավարությունը և, առհասարակ, Ընկերության բոլոր գործերը:

Մասնավորապես Խորհրդի պարտականություններն են.

ա) նախորոք քննել Վարչության կազմած Ընկերության գործունեության ծրագիրը, նախահաշիվը, գործառնությունների վերաբերյալ կանոնները, հրահանգները և բոլոր այն առաջարկությունները, վորոնք ներկայացվում են Ընդհանուր Ժողովի քննությանը և զրանց մասին իր յեղրակացությունը տալ:

բ) քննել Վարչության կազմած հաշվեկշիռները, հաշիվները և զուտ ոգուտի բաշխման ու ֆեաք ծածկելու վերաբերյալ նախագծերը և զրանց մասին իր յեղրակացությունը ներկայացնել Ընդհանուր Ժողովին:

գ) քննել Վարչության դեմ այն բողոքները, վորոնք տրվում են Խորհրդին և ներկայացնել Ընդհանուր Ժողովին Վարչության դեմ տրված բողոքների վերաբերյալ յեղրակացություններն այն դեպքերում, յերբ բողոքը տրվում է Ընդհանուր Ժողովին:

դ) նշանակել իր կազմից փոխարինողներ մինչև մոտակա Ընդհանուր Ժողովը Վարչության այն անդամների, վորոնք հեռացել են ժամանակից առաջ, յեթե Վարչության անդամության թեկնածուներ չկան:

ե) քննել բոլոր այն գործերը, վորոնք Ընդհանուր Ժողովը կամ Վարչությունը հանձնում է Խորհրդի վորոշման, ինչպես նաև իրագործել այն խնդիրները,

վորոնք վերապահված են նրան կանոնադրության համաձայն:

42. Սորհուրդը ցուցմունքներ է անում Վարչության՝ նրա թույլ տված անկանոն կամ Ընկերության շահերին անհամապատասխան գործողությունների առթիվ: Ընկերության գործերում եյական անկարգություններ և զեղծումներ նկատելու դեպքում Սորհուրդը պարտավոր է Արտակարգ Ընդհանուր Ժողով հրավիրել:

43. Սորհուրդը բաղկացած է վոչ պակաս, քան 5 անդամից և 2 թեկնածուից, վորոնք ընտրվում են Ընդհանուր Ժողովում 2 տարի ժամանակով Ընկերության այն անդամներից, վորոնք չեն մտնում Վարչության և Վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ:

Սորհրդի անդամը չի կարող Ընկերության մեջ ունենալ ծառայել:

44. Սորհրդի նիստը, կայացած է համարվում յեթե ներկա յեն Սորհրդի անդամների կեսից վոչ պակաս, նրանց թվին նախագահը կամ նրա փոխանորդը:

Սորհրդի նստերին կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնով Վարչության և Վերաստուգիչ Հանձնաժողովի անդամները և Սորհրդի, Վարչության և Վերաստուգիչ Հանձնաժողովի անդամության թեկնածուները: Սորհրդի վորոշումներն արձարագրվում են առանձին գրքում:

45. Սորհրդի դեմ բողոքներ տրվում են Ընդհանուր Ժողովին, սակայն միայն Սորհրդի միջոցով, վորը պարտական է ներկայացնել այդ բողոքները մոտակա Ընդհանուր Ժողովին իր բացատրություն հետ:


3. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

46. Վարչությունը—Ընկերության գործադիր մարմինն է:

Վարչությունը վարում է Ընկերության բոլոր գործերը, առաջնորդվելով այս կանոնադրությամբ և

Ընդհանուր Ժողովի հաստատած կանոններով: Վարչությունն իրենով փոխարինում է Ընկերությանը առանց վորեն հավատարմաթղթի բոլոր նրա գործերում և հարաբերությունների ժամանակ:

Մասնավորապես՝ Վարչության պարտականություններն են. ա) կազմել Ընկերության գործունեության ծրագրեր, նախահաշիվներ, գործառնությունների վերաբերյալ կանոններ և հրահանգներ և Սորհրդի կարծիքի հետ միասին ներկայացնել Ընդհանուր Ժողովի հաստատման, բ) Ընկերության անունից պայմանագրեր կնքել, դրանց թվին՝ գնման, գրավի, կալքի վարձակալության և ոտարացման ակտեր կազմել և փոխառություններ կատարել այն չափերով, վոր վորոշել է Ընդհանուր Ժողովը. գ) փողեր ստանալ, վճարել և Ընկերության պատկանած և նրան հանձնված արժեքներն ու ստացվածքը պահպանել, ավանդներ ընդունել և վերադարձնել. դ) ապրանքներ և ուրիշ գույք գնել, ծախել և ապահովագրել, նույնպես և ուրիշ գործառնություններ կատարել, վորոնք նախատեսված են այս կանոնադրությամբ. ե) Ընկերության արտադրական ձեռնակները կառավարել. զ) ծառայողներ և բանվորներ հրավիրել և արձակել, նրանց ունեցողներ նշանակել Ընդհանուր Ժողովի հաստատած նախահաշիվի համաձայն, ը) Ընկերության գործերը վարելու համար հավատարմագրեր տալ. թ) Ընկերության ոգտին պահանջներ կատարել և դատարանում պատասխանել Ընկերության ներկայացված պահանջներին. ժ) հաշվապահություն և գործավարություն տանել, Ընկերության գործերով հաշիվներ ներկայացնել և հարաբերություն պահպանել բոլոր անհատների և հիմնարկությունների հետ. ի) տարեկան հաշիվ կազմել և Սորհրդի ու Վերաստուգիչ Հանձնաժողովի՝ յեղրակացությունների հետ ներկայացնել Ընդհանուր Ժողովին հաստատելու. լ) անդամների հերթական և արտակարգ Ընդհանուր Ժողովներ հրավիրել և խ) կատարել բոլոր այն պարտականությունները, վորոնք առանձին հիշատակված են այս կանո-



նագրութեան մեջ և բղխում են կանոնադրութիւնից և Ընդհանուր ժողովի վորոշումներէից:

47. Ընկերութեան բոլոր գրավոր հարաբերութիւնները Վարչութիւնը կատարում է նախագահի կամ Վարչութեան վորեւ անդամի ստորագրութեամբ: Ընկերութեան պարտաթղթերը, մուրակները, չեքերը և այլ դրամական վավերաթղթերը, նույնպէս և նրա անունից լիազորութիւնները (հավատարմագրեր) պետք է ստորագրված լինեն նախագահի (կամ փոխարինողի) և Վարչութեան մի անդամի կողմից, կամ այն անձի կողմից, վորն ունի Վարչութիւնից ստացած նոտարական հավատարմագիր:

48. Վարչութեան անդամները, վորոնք խախտում են իրենց պարտականութիւնները, միասին պատասխանատու չեն իրենց ամբողջ ստացվածքով բոլոր այն փաստերի համար, վոր պատճառել են Ընկերութեան:

Վարչութեան այն անդամները, վորոնք ցանկանում են Վարչութեան առանձին գործողութիւնների վերաբերմամբ պատասխանատվութիւնից ազատվել, իրավունք ունին պահանջելու, վոր իրենց առանձին կարծիքը մտցվի Վարչութեան նստի արձանագրութեան մեջ կամ իր ժամանակին, գրավոր հայտարարութեան միջոցով հաղորդել այդ գործողութիւնների մասին Ընկերութեան Խորհրդին կամ Վերաստուգիչ Հանձնաժողովին:

49. Վարչութիւնը բաղկացած է 3 հոգուց, վորոնց ընտրում են Ընդհանուր ժողովում Ընկերութեան անդամները 2 տարով: Նույն կարգով ընտրվում են Վարչութեան անդամների վոչ պակաս քան 2 թեկնածու, վորոնք փոխարինում են Վարչութեան բացակայող կամ հեռացած անդամներին:

50. Վարչութեան անդամների միջև պարտականութիւնները բաժանելիս՝ հաշվապահի պարտականութիւնները վոչ մի դեպքում չի կարելի միացնել գան-

ձապահի պարտականութիւնների հետ: Վարչութեան գանձապահը չի կարող միաժամանակ վարել և ուրիշ վորեւ դրամարկղի գործերը:

51. Վարչութիւնը ժողովի յե հավաքվում շաբաթական մի անգամից վոչ պակաս:

Վարչութեան նիստը կայացած է համարվում, յեթե ներկա չեն Վարչութեան 3 անդամը (վորոնց թվում՝ նախագահը կամ նրան փոխարինողը):

52. Վարչութեան անդամի հիվանդութեան կամ բացակայութեան դեպքում, նրա տեղը բռնում է այն թեկնածուն, վորն ստացել է ամենաշատ ընտրական ձայն:

53. Վարչութեան մեջ գործերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ, Վարչութեան վորոշումները արձանագրվում են առանձին գրքի մեջ և ստորագրվում Վարչութեան բոլոր ներկա յեղող անդամների կողմից:

4. ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

54. Վերաստուգիչ Հանձնաժողովը ներքին կոնտրոլի մարմինն է հանդիսանում:

Վերաստուգիչ Հանձնաժողովի պարտականութիւնն է ստուգել Վարչութեան ներկայացրած հաշիւներն ու նախահաշիւները և նրանց վերաբերմամբ իր յեզրակացութիւնները ներկայացնել Ընդհանուր ժողովին, ինչպէս նաև Ընկերութեան ամբողջ ստացվածքի և բոլոր գործունեութեան ստուգումը (ոեվիդիան) կատարել:

Մասնավորապէս, Վերաստուգիչ Հանձնաժողովի պարտականութիւնն է.

ա) քննել Վարչութեան կազմած տարեկան հաշիվը և նրա վերաբերմամբ իր յեզրակացութիւնը ներկայացնել Ընդհանուր ժողովին, ինչպէս նաև ստուգել

դրամարկղի, ապրանքների և ստացվածքի հաշվետվության տարվա վերջին՝ մնացորդները.

բ) վոչ պակաս քան ամիսը մի անգամ ստուգել առձեռն դրամը, արժեքավոր թղթերը և ուրիշ արժեք. ներք և համեմատել այն գրքերի և նախահաշիվների հետ.

գ) ստուգել ապրանքները և այլ գույքը, վոր պատկանում է Ընկերության կամ նրան և հանձնված, նույնպես և Վարչության ստացած գրավականները.

հ) ստուգել հաշվապահությունն ու գործավարությունը գրքերով և վավերաթղթերով.

զ) խորհրդի հանձնարարությունյամբ ներկայացնել Ընդհանուր ժողովին իր յեղրակացությունները Վարչության գեմ տրված բողոքների վերաբերմամբ և այլ պարտականություններ, վորոնք առանձին հիշատակված են կանոնադրության մեջ և բղխում են Վերաստուգիչ Հանձնաժողովի նպատակների ելությունից:

ը) ներկայացնել Ընդհանուր ժողովին իր տարեկան գործունեության հաշիվը:

Վարչությունը պարտական է աջակցություն ցույց տալ Վերաստուգիչ Հանձնաժողովին նրան անհրաժեշտ տեղեկությունները, վավերաթղթերը և այլն ներկայացնելով:

55. Վերաստուգիչ Հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից և 2 թեկնածուից, վորոնք ընտրվում են Ընդհանուր ժողովում 2 տարի ժամանակով Ընկերության այն անդամներից, վորոնք չեն մտնում Վարչության և խորհրդի մեջ և Ընկերության ծառայողներ չեն:

56. Վերաստուգիչ Հանձնաժողովը Վարչության և խորհրդին տեղեկացնում է Ընկերության գործերում իր յերեկան բերած անկանոնությունների և զանցառությունների մասին: Ընկերության գործերի մեջ ափսոսելի եյական անկարգություններ և զեղծումներ յերեկան հա-

նելու դեպքում Վերաստուգիչ Հանձնաժողովը, այդ մասին Վարչության և խորհրդին տեղեկացնելուց հետո, Արտակարգ Ընդհանուր ժողով է հրավիրում (§ 34):

57 Վերաստուգիչ Հանձնաժողովը հավաքվում է նախագահի հրավերով կարիք յեղած դեպքում, սակայն վոչ պակաս, քան տարեկան 4 անգամ: Ստուգման տառանձին գործողությունների կատարել Վերաստուգիչ Հանձնաժողովը կարող է հանձնարարարել իր առանձին անդամներին: Իր բոլոր գործողությունները Վերաստուգիչ Հանձնաժողովը արձանագրում է առանձին գրքի մեջ:

Իր յեղրակացությունները Վերաստուգիչ Հանձնաժողովը հայտնում է Ընդհանուր ժողովին, նախորդ այդ մասին տեղեկացնելով Վարչությանը:

58. Վերաստուգիչ Հանձնաժողովի դեմ բողոքները տրվում են Ընդհանուր ժողովի անունով և միայն Վերաստուգիչ Հանձնաժողովի միջոցով, վորը պարտական է ներկայացնել այդ բողոքները Ընդհանուր ժողովին իր բացատրության հետ:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈԳՈՒՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՎ ՎՆԱՍԻ ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

59. Ընկերության հաշվապահությունը և գործավարությունը տարվում են ոռւս լեզվով:

60. Ըկերության գործառնության (ոպերացիոն) տարին սկսվում է հոկտեմբերի 1-ին և վերջանում սեպտեմբերի 30-ին:

61. Գործառնության տարին վերջանալուց հետո Վարչությունը կազմում է և և ստորագրում տարեկան հաշիվը: Տարեկան հաշիվը պետք է պարունակի իր մեջ Ընկերության գործունեության վերաբերյալ տվյալները,

մասնավորապես՝ հաշվեկշիռը, ոգուտի և ֆւսաի հաշիվը, մուտքը, յեկքը և տարվա ընթացքում արտադրական շրջանառութեան մնացորդները (ամեն մի շրջանառութեան վերաբերմամբ՝ առանձին), տվյալներ անդամների թվի փոփոխութեան մասին և Լնկերութեան պարտավորութեանների համաձայն բոլոր անդամների վրա ընկած պատասխանատվութեան չափը ընդհանուր գումարով, ինչպես նաև ժամանակն անցկացրած և հետաձգված փոխարինարար ստացված գումարների թիվն ու գումարը, Վարչութեան յեզրակացութեամբ նրանց վերադարձվելու վերաբերմամբ: Լնկերութեան գուտ ոգուտը համարվում է հաշվետու տարվա ընդհանուր յեկամուտի գումարը, վորից դուրս են հանվում Լնկերութեան վարչական և գործառնութեանների բոլոր ծախսերը, դրանց թիվում և վճարված կոտպերատիվ հավելումներն ու Լնկերութեան ֆւսաը:

62. Վարչութեան կազմած տարեկան հաշիվը պետք է ներկայացվի Ընդհանուր Ժողովի քննութեան և հաստատմանը գործառնութեան տարին վերջանալուց հետո 3 ամսից վոչ ուշ:

Յեթե Վարչութեանն այդ ժամանակվա ընթացքում չկազմի տարեկան հաշիվը, Վերաստուգիչ Հանձնաժողովը պարտական է իր հսկողութեամբ ուրիշ անձանց հանձնել նրա կազմելու:

63. Նախքան Ընդհանուր Ժողովին ներկայացնել՝ հաշիվը՝ գրքերի և վավերաթղթերի հետ միասին ստուգում է Վերաստուգիչ Հանձնաժողովը, վորը նրա մասին տալիս է իր յեզրակացութեանը հենց նույն հաշիվ վրա իր ստորագրութեամբ: Հերթական Ընդհանուր Ժողովից յերկու շաբաթ առաջ, հաշիվը վորոշված ժամերին պետք է Վարչութեան մեջ բաց լինի՝ Լնկերութեան անդամների գիտողութեան համար:

64 Հաշիվն հաստատելու ժամանակ, գուտ ոգուտից 25 տոկոսից վոչ պակաս հատկացվում է Լնկերութեան հիմնական գրամագուլութիւն և վոչ պակաս քան 20

տոկոս պահեստի դրամագուլութիւն: Զուտ ոգուտի մնացած մասը Ընդհանուր Ժողովը կարող է դարձնել հատուկ դրամագուլութիւններ կանոնադրութեամբ նախատեսված գործառնութեանների և ձեռնարկութեանների համար, վճարել իր փայավճարները, § 33-ի թ կետի համաձայն, և ուրիշ նպատակների, ինչպես նաև կոտպերատիվ, կրթական և հասարակական ոգտավետ նըպատակների (չքավորների վարկավորման, դպրոցական ֆոնդեր, մուրներ և այլն):

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Լնկերութեան փայերին դիվիդենտ տալու համար գուտ ոգուտից, բոլոր վերե հիշված հատկացումները կատարելուց հետո, կարող է նշանակվել ոգուտի 20 տոկոսից վոչ ավելին և արվում է փաստորեն լիովին վճարված փայավճարների 12 տոկոսից վոչ ավելի:

65. Տարվա գործառնութեանների հետեանքով ստացված վնասը ծածկվում է պահեստի դրամագուլութիւց: Յեթե վնասը այդպիսով չծածկվի, այն ժամանակ Ընդհանուր Ժողովը բաց մնացած գումարը բաժանում է Լնկերութեան անդամների մեջ՝ նրանց լրացուցիչ պատասխանատվութեան (14 §) համաձայն և նշանակում է ժամանակ տարվա մինչև վերջը վճարել իր մասը: Չվճարելու դեպքում Վարչութեանը կարող է չվճարողին պատկանած փայը՝ բռնել նրանից հասանելիք, վերել հիշված բաշխման համաձայն, պարտքի դեմ: Այն վնասը, վոր ստացվել է հատուկ դրամագուլութիւններով կատարված գործառնութեաններից, ծածկվում է նույնպես պահեստի դրամագուլութիւց և հետո բաց մնացած մասը գրվում է համապատասխան հատուկ դրամագուլութի հաշվին:

Վնասը, վոր գոյացել է Վարչութեան անդամների անկանոն գործունեութեան հետեանքով, պետք է ծածկի հանցավորը, իսկ նրանից ստացված փողերը պետք է հատկացվեն այն դրամագուլութիւններին, վորոնք վնաս են կրել, կամ Լնկերութեան այն անդամներին

ե վերադարձվում, վերոնք ծածկել են վնասը իրենց վճարներով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

66. Ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը ղեկավարելով Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ՌՍՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի հաստատած և Համգործկոմի «Իզվեստիա»-ի մեջ 1927 թ. հոկտեմբերի 25, 26, 27 և 28-ի №№ 245, 246, 247, 248-ի մեջ հայտարարված գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ կանոնադրով:



ՀՀ Ազգային գրադարան



NL0203323

25586

02482

907

1

1